

ԱՆՏՈՆ ԳԱՐԱԳԱՇՅԱՆԻ «ԿՐՈՆՔ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ»
ԱՆՏԻՊ ՆՈԴՎԱԾԸ

«Երանք և բարոյական» վերնագրով կիսավարտ, անստորագիր, 12 էջանոց մի ձեռագիր է այսօր հայտնի Հայկական ՍՍՌ-ի ԳՍԽ Գրականության և արվեստի թանգարանի Թորոս Ազատյանի արխիվի VIT բաժնի 33 համարի տակ: Ձեռագիրը գրված է թանաքով, 12X18 սմ չափի նամակի թղթի վրա: Վերնագիրը գրված է մատիտով:

Ժխտ է վարվել թանգարանի աշխատակից Միքայել Բարթիկյանի, երբ այդ գործը վերագրել է XIX դարի հայ մշակույթի ականավոր գործիչ Անտոն (Մատթիա) Գարագաշյանի շրջին: Նախ ձեռագրի 8-րդ էջում հոգվածագիրը իրեն ներկայացնում է որպես «Քննական պատմության» հեղինակ, որը նպատակ է ունեցել գրել հայ ժողովրդի պատմություն՝ հիմնված «չ թե ավանդությունների, այլ գրական փաստերի վրա: Հայտնի է, որ այդպիսին հանդիսացել է Անտոն Գարագաշյանը: Երկրորդ՝ ավելի ձեռագրի երկրորդ և երրորդ պարբերությունները, որպես Գարագաշյանին պատկանող մտքեր, ապագրվել են 1898 թվականին («Բյուրակն», X՝ 29, էջ 533—535) և այդ հանգամանքը մինչև այժմ ոչ ոք չի հերքել:

Հրատարակվող ձեռագիրը մինչև այժմ անհայտ է մնացել գիտական հասարակացությանը: Դրան ծանոթ է եղել միայն Գ. Խաչկունցը, որի համար այն գրված էր: Ծարագրելով Գարագաշյանի կենսագրությունը, Խաչկունցը գրում է. «1856 թվին տնոր (Գարագաշյանի — Գ. Խ.) միտքը կազմուրի, կղերականությունը վրայեն կթոթափել՝ իր համոզման համաձայն չղտնելով զայն: Ասոր շարժառիթը, զոր մեր խնդրանքով գրված է, բառ առ բառ առաջ կբերենք» («Բյուրակն», 1898, էջ 533): Այս տողերից հետո նա մեջբերում է հրատարակվող ձեռագրի 2-րդ և 3-րդ պարբերությունները: Հակառակ իր հավաստիացմանը, Խաչկունցը հասկանալիորեն հրատարակում է զգալի կրճատումներով: Նա չի հրատարակել հատվածի այն մասերը, որտեղ Գարագաշյանը արտահայտել է կրոնի դեմ ուղղված մտքեր:

Ձեռագիրը հեռաբերություն է ներկայացնում XIX դարի հայ փիլիսոփայական ու հասկական աթևիստական մտքի, պատմագրության և լեզվաբանության պատմությունը ուսումնասիրող գիտնականների համար: Այս միակ երկն է, որտեղ Գարագաշյանը բացահայտորեն կրոնն ու աստվածապաշտությունը համարում է մարդու զարգացումը կաշկանդող ուժ և կրթությանը բնապատում այն սխալ տեսակետը, որ անաստվածությունը անբարոյականություն է:

40-ական թվականներին կրոնի ճշտությունը կասկածի տակ առնող, 1856 թ. սրեմաթոզ եղող, 60-ական թվականներին բնապատմական միտքն ու ազատամտությունը քառադոկող, 70-ական թվականներին Չամուռճյանի դեմ պայքարելիս Նալբանդյանին պաշտպանող ու ճիշմարտությունը ոչ թե կրոնների ու մտքական մեջ, այլ «փորձառական գիտության մեջ» փնտրող և 80-ական թվականներին հրաշքների ու բնածին գաղափարների գոյությունը ժխտող ու ամեն ինչ բնական պատճառներով բացատրող Գարագաշյանը սույն աշխատության մեջ գիտակցորեն կանգնում է «նյութականության» դիրքերում: Ինչպես է Գարագաշյանը հասկանում այդ «նյութականությունը»։ «Զգալի գաղափարները միայն իրական համարելի կհետնի, որ զգալի իրերը միայն իրական գոյություն ունեն, և որովհետև զգալի իրերը նյութական են, ապա նյութին ուրիշ իրական գոյություն ունեցող բան չկա: Նյութական կամ բնական աշխարհն ալ ուրիշ աշխարհ չկա: Նյութականության համար առաջին պատճառը շրջահանուր նյութ մըն է, որ արեգակը կազմեց բոլորով (emanation), այսինքն՝ իրմե դուրս աղող և կամ զինք այլ և այլ ձևերու դարձնելով» (չամուռճյանի պատմություն փիլիսոփայության, Կ. Պոլիս, 1868, էջ 8):

Գարագաշյանի փիլիսոփայության հիմնական գիծը ֆեոդալիզմի, խավարի ու թուրքական միապետության դեմ պայքարող ժողովրդին դիտության մեջ զինելու հակումն է։ Գիտության մեջ նա հենվում է կամարկի և Գարվինի ուսմունքի վրա՝ ընդդեմ ստեղծագործության ու հրաշքի երոնական պատկերացումներին, ընդդեմ այն տեսության, որ անջրպետ գոյություն ունի մարդու և կենդանիների միջև, հենվելով քիմիական սինթեզի վարձագցման վրա քննադատում է վիտալիզմը, էվոլյուցիոնիզմի «գնությունը»՝ ժխտում է կատակլիցիզմների ուսմունքը, ելնելով այդ բոլորից և ուժի ու կենդանի պահանջման ու փոխակերպման օրենքից, նա պաշտպանում է գիտական խմացությունը ընդդեմ կրոնի։

Սույն ձևազերթը հետաքրքրական է նաև Գարագաշյանի լեզվաբանական հայացքների էվոլյուցիոնիզմի բմբունման տեսակետից։ Նա ընդհանրապես հայտնի էր որպես գրաբարի ջերմ պաշտպան, որի համար քննադատվել է ժամանակի առաջադեմ մտածողների կողմից։ Հայտնի է նաև, որ Գարագաշյանը հակադրում էր իրար հայ ժողովրդի երկու հատվածների լեզուները։ Մյա հոդվածում նա փաստորեն հրաժարվում է իր այդ սխալ տեսակետներից և հարց է դնում գրադվել աշխարհագրորդի մշակմամբ։

Գ. Տ. ԽՐԼՈՊՅԱՆ

ԿՐՈՆՔ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Իմ աշխատ փիլիսոփայական դրությունն է նյութականություն (materialisme)։ Ինչպես հայտնի է, կա նաև հոգեկանություն (spiritualisme), զոր մարթ է կոչել մանավանդ աստվածաբանություն, քանզի հիմնյալ է հայտնության վրա, կամ, լավ ևս ասել, դրույն (աստվածաշունչի) և եկեղեցական հարց վարդապետության վրա։ Թերևս հարցվի մեղ թե ուստի շարժյալ թողինք հոգեկանությունը, զոր կղավաներինք ի վազուց իբրև եկեղեցական, և հարեցանք նյութականության¹։

Վիեննայի Միխիթարյանց դպրոցին մեջ ուր առած ենք մեր առաջին դասախոսարկությունը՝ մեր փիլիսոփայության դասատուն (անունը չեմ հիշեր) բավական երկար խոսեցավ անդամ մը հոգեկանության և նյութականության վրա, հարկավ մեծ դոլեստիվ պառաջնույն, և անհնարին սլարսավանոք զվերջնույն, իրբև մոլար և հոգեկորույս դրություն։ Զկնի դասին բավական վեճ եղավ մեր մեջ հիշյալ երկու դրությանց վրա, մանավանդ որ մեր սլատվելի դասատուն, զխոմամբ թե հանդետս, չեմ դիտեր, չմոռցավ ըսել ցավով թե, հիմա (իրբ քառասուն տարի առաջ²) մեր սերմանացի գիտնոց մեջ շատ հառաջ կերթա նյութականությունը։ Ուրիշ անդամ նույն սլատվելի դասատուն խոսելով դարձյալ

¹ Գարագաշյանը 1831 թ. Վիեննայի Միխիթարյան միաբանության Պոլսի վարժարանը ավարտելուց հետո ուղարկվում է Վիեննայի վանքը, որտեղ 1840 թվականին օժտվում է վարդապետ ու ստանում Մատթիա անունը։ 1843 թ. մարտի 14-ից նա սկսում է հետևել Վիեննայի համալսարանի բնական պատմության դասընթացներին, 1848 թ. հունիսի 7-ին մեկնում է Զմյուռնիա, իսկ այնտեղից 1849 թ. հուլիսի 17-ին՝ Պոլս։ Մինչև 1856 թ. նա ոչ-համակիր միաբան էր, իսկ 1856 թ. նա հրաժարվում է կղերականությունից և կրոնից ու զրադվում ուսուցչության, թարգմանչության, պատմագրության ու դասադրբեր կազմելու։ 1903 թվականին, երբ նա վախճանվում է, պոլսահայ և ոչ մի կրոնական համայնք չի համաձայնվում նրան թաղել։ Վերջապես հայ կաթոլիկ մի վարդապետ հնարում է մի առասպել, ըստ որի Գարագաշյանը հոգեբուժական հիվանդանոցում մահանալուց առաջ իրբ զղջացել է իր հակակրոնական գործունեության համար և մեղա եկել։ Այդ հիման վրա, նրան թաղում են որպես վարդապետի։

² Գարագաշյանը Վիեննայի Միխիթարյան դպրոցում սովորել է 1832—1840 թթ.։ Այսպիսով հոդվածը ամենաուշը կարող է գրված լինել 1880 թվականին։ Քաշկոնցի հրա-

փիլիսոփայության վրա ըստով թե փիլիսոփայության նյութը սլարտի լինել ստույգն և դրական, ոչ թե վերացյալ, երևակայական: Եթե այդպես է, ըսի մեր ոլատովելի գասատուն, ի՞նչ ստույգ և դրական ասացույց կա ի նպաստ հոգեկանության, զորմե այնպես գոյություն մի խոսեցաք մեր անցյալ դասերուն մեջ: «Հոգեկանության նյութն են, ըստով, ինչպես ըսի ձեզ, Աստված՝ իրրե անհուն հոգևոր էակ, արարիչ նյութս յոչնչե, և աննյութ անմահ հոգիներու, հրեշտակաց և դիւայց, և մեր իսկ բանական հոգւոյն. իրք որո ստուգությունը չլերցուներ ամենևին տարակույս»: Այս տեսությունն, որո տկարությունը ճանչնալ գեռ չէինք կարող, լուեցույց դիւս, թեպետ չգոհացուց որպես սլարտ էր:

Բաժական ժամանակ ետքը հանդիպեցա գերմաներեն համառոտ գրված մը, ուր հեղինակը կծաղրեր յոչնչե արարչության վարդապետությունն իրրե անտեղի, ըսելով թե տիեզերք, անվանե երկրիս, ոչ եթե յոչնչե եղած է ըստ ավանդության գրույն և եկեղեցական հարց, այլ է արդյունք՝ և վարդապետմն բնական զորությանց, որ ամբողջ ժամանակե հետե կաղմած և հառաջ բերած են, կրերեն և սլիտի բերեն ամեն գործարանավոր և ագործարան մարմին: Վերջապես, կրսեր. «Ամեն մարմին և մեր իսկ, ոչ թե անհուն էակի մը կամաց, ոչ բնական զորությանց գործ ենք»¹: Ընկերներես հայր Հովսեփ Գաթաճյան, արդարե առաջին կարգի աստվածաբան, փիլիսոփա և գրագետ, չհաճեցալ այս վարդապետության: Գերմանացի բարեկամ մը տեսնելով իմ հետաքրքրությունս այս նյութերուն վրա, ըստով թե գերմանացի նոր գիտուններու գրվածները կարդալու եմ, և տվալ դանվանս գիտնոց ոմանց, որոց մին էր Լուտվիկ Բյուխներ: Արբահայրն, չեմ գիտեր ինչպես, իմանալով թե ես արդի գերմանացի գիտնոց, յանվանե Բյուխների գրվածները կարդալու գհետ եմ, և չգիտնալով թե ով էր Բյուխներ, որո ոչ թե գրվածքներն, այլ անունն անդամ չէր գիտեր, կհարցունե գերմանացի եկեղեցականի մը, և կառնու սլատասլիսան թե այն մարդը սոսկալի անհավատ է, և գրվածները վնասակար են քան զՎոլթերին²: Արբահայրն խրատ տվալ մեզ սլատնալոցը և անհնարին սլարստվանելով գերմանական փիլիսոփայությանը դեմ, որուն ամենևին տեղյակ չէր, ըսելով թե, «ունենալով Բոսուեի և Ֆենելոնի սքանչելի մատյաններն, ինչ

տարակած հատվածում «Իր քառասուն տարի տոաջ» նախադասության փոխարեն արդված է «Իր 58 տարի տոաջ»: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հոգվածը տպվել է զրվելուց 18 տարի հետո, հետեաբար այն զրվել է 1880 թվականին:

¹ Այդպիսի տեսակետներ են պաշտպանել տարերային մատերիալիստ, էվոլյուցիոն ուսմունքի պաշտպան գերմանացի գիտնականներ Ալեքսանդր Հումբոլդտը (1769—1859) և Լեոպոլդ Բախը (1777—1853):

² Հոգվածը զեպից 40 տարի հետո գրած լինելով՝ Գարագաշյանը շփոթում է: Մինչև 1848 թվականը թե՛ Գարագաշյանի գերմանացի բարեկամը, թե՛ արբահայրն ու նրա ծանոթը և ոչ էլ ինքը Գարագաշյանը չէին կարող ծանոթ լինել Բյուխների մատերիալիզմին: 1848 թվականին Բյուխները, համալսարանը նոր ավարտած՝ հրատարակեց ներվային համակարգի մասին իր բժշկական անդրանիկ հոգվածը: Միայն 1855 թվականին լույս է տեսնում նրա թվով չորրորդ, բայց փիլիսոփայական տոաջին աշխատությունը՝ «Ամեն ու նյութը», որից և Գարագաշյանը հիմնականում ազդվել է: Այսպիսով, Վիեննայում նա բյուխներյան մատերիալիզմին ծանոթ լինել չէր կարող: Բայց Գերմանիայում 30—40-ական թվականներին հանձինս երիտասարդ հեղեղականների, Ֆոյերբախի, Հումբոլդտի, Բախի և այլոց, աշխուժանում էր հակակրոնական սլաքաբար, փիլիսոփայության ու բնագիտության մեջ սկսում էին ուժեղանալ մատերիալիզմի գրեհորումները: Մեծ հավանականությամբ Գարագաշյանը հենց նրանցից է ազդվել:

պետք կար անաստված գերմանացիներու գրվածներուն. նա մանավանդ խոսեցավ թե կըցաւեր որ թույլ տրուած էր մեզ ուսանիլ գերմաներէն լեզուն. ոչ ապաքէն բաժական էին խտալացի և գաղիացի բարեպաշտ հեղինակներ, յորոց միայն կրնանք սորվիլ՝ ոչ միայն դիտութիւն, այլև ճշմարիտ բարոյական, մինչ գրվածք այն անհավատ սուտ գիտնոց վնասակար են թե հոգւոյ և թե մարմնոյ: Թեոքս իրաւունք ունէր բարեպաշտ արքահայրն ըստ յուր կարծեաց համարել այն գրվածներն վնասակար հոգւոյ, բայց ուստի կառնովի թե վնասակար էին նաև մարմնոյ: Անտարակույս, վասնդի, ինչպէս կոյնդէն աստվածաբանք, նյութականութիւնը մերժելով Աստուծո և հանդերձելուն վրա ամեն հաւատք, կրաջալերէ դմարդ անսանձ զհետ երթալ սոսկալի մոլորութեանց, որոց հետեանքն է ամեն տեսակ ախտ և մահ: Ո՞րչափ հակառակ գտաւ Արքահորը պարստականաց, երբ Կոստանդնուպոլիս գալով պատեհութիւն ունեցաւ բերել տալ դայն պարստակույն, կըսեմ յոնիրավի գրաւարտելուն Բյուսնէրի գրվածներին: Քան թոտրիկիկաց անուն Հիսուսյան քահանային խոնարհութեան ճառերն, զորս այնպէս հիանալով կկարգայինք, ապէլի սքանչելի գտաւ Բյուսնէրի «Մարդ ըստ գիտութեան» կոչված գործին երկրորդ մասն¹, ուր այն բամբաստալ անհավատն կխոսի ոչ իրեն վերացյալ բարոյագետ, այլ իրեն հմուտ հնագետ, մարդու խոնարհ ծաղման վրա, և լուսավոր կերպով կցոյցնէ թե արդի քաղաքակիրթ մարդն անգամ չունի պատճառ ամբարտաւանելու յուր լնական և իմացական առավելութեանց համար:

Բայց կոյնդէն հոգեորականք թե, եթէ ընդունինք ևս թե ունենալ ճշմարիտ բարոյականութիւն, այսինքն՝ բարի և առաքինի վարք, հնարավոր է նաև նյութականաց, տակաւին կմնա անհերքելի թե Աստված կպահանջէ մենն ոչ միայն բարի վարք, այլև հավատք գերագույն էութեան, հոգւոյ անմահութեան և հանդերձյալ կենաց: Առանց այս որեւիցէ բարի գործ բաժական չէ փրկութեան համար:

Այս համառոտ տեսութեան մեջ մեր նպատակը չէ մտնել հոգեկանութեան այն կնճոռոտ խնդիրներուն որ պարզապէս աստվածաբանական են, այլ ըսել միայն նախ՝ թե սուտ և զրպարտութիւն է թե նյութականութիւնը կրաջալերէ դմարդ անսանձ զհետ երթալ սոսկալի մոլորութեանց որոց հետեանքն է հիւանդութիւն, մահ և ուրիշ մեծամեծ չարիք: Մոլորութեանց անսանձ զհետ դացողներ կան ոչ նյութականաց միայն, այլև հոգեկանաց մեջ: Այն որ դժբախտութեամբ իրեն ունակութիւնը բրած է մոլորութիւնը, զհետ կերթալ մոլորութեան անխտիր. դմարդ մոլորութենէ զգուշացնելու դորավոր գրգիռ մը եթէ կա, առաքինութեան զգացումն է, և անձին և յուր սիրելիներուն վնասակար, և ընկերութեան մեջ անպատիւ ըլլալու նկատումը: Կըսենք երկրորդ՝ թե երկուդ երևակայել էակն մը որ իրր թե անողոք խտտութեամբ կհսկէ մեր վրա, և յուր կամքն ավանդելով հանձնած է գրով մեծաւ մասամբ տգետ ժողովի մը՝ պատմիրելով

¹ Բյուսնէրի «Մարդ ըստ գիտութեան, նրա անցյալը, ներկան և ապագան, որտեղից ենք մենք, ինչ ենք մենք, ուր ենք գնում մենք» աշխատութիւնը, որի երկրորդ բաժնի արձանիքների մասին է խոսում Գարազայանը, հրատարակվել է 1870 թվականին Նրա Պոլիս տեղագիրքի 21 տարի, իսկ սքեմաթոգ լինելուց 14 տարի հետո: Տեքստի շարադրանքից այն տպավորությունն է ստացվում, թե Գարազայանը Բյուսնէրի երկերի հետ սկսել է ծանոթանալ հենց այդ թվականից: Հիշյալ երկի երկրորդ բաժնի մասին է նա խոսում նաև իր քննական պատմության առաջին հատորում («Քննական պատմութիւն հայոց», մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 137):

մեզ հնազանդիկ նմա, և ստատնալով մատենի զմեզ, և թե հնազանդիկն հավիտենական անշեջ հրո, ոչ միայն է սուտ և անտեղի, այլև մեծավ մասամբ վնասակար և արգել մեր մտավոր և բարոյական հառաջադիմության, որ էական սլայմանն է մեր զոյություն: Գոյություն մը, որ կերթա ծննդեն մինչև գերեզման:

Գիտենք որ նյութականք (materialiste) ժամանակավ որ շատ հետի չէ մեր դարեն՝ կարհամարհելին ու կհալածվին իսկ. բայց փառք լուսավորության, մեր դարուն մեջ ոչ որ այս ինչ կամ այն ինչ կրոնական կամ փիլիսոփայական կարծյաց համար կանարգի և կհալածվի¹. հայտնի անբարոյական մը վարուք, այսինքն՝ այն որ ընկերական և քաղաքական կարգաց և օրինաց հակառակ է գործով, զինչ և իցե յուր կրոնական կամ փիլիսոփայական կարծիքը, կանարգի, նա կպատժի իսկ ի հարկն ամեն կանոնավոր ընկերության մեջ: Մանավանդ թե հիմա ամեն ազատամիտ անձն հարգի և պատվական է յուր ազատամտության համար, և թե է վարուք պատու և առաքինի, հնազանդ օրինաց և օրինավոր իշխանության:

Գերմանացի Քյուլեներ, բժիշկ և իրավագետ, իրեն հայտնի և հրապարակյալ նյութական, ունի շատ գրվածներ. զխավորն և առաջինն որ է «Չորություն և նյութ» (Force et matiere), վեցասան անգամ տեսած է լույս բնագիր լեզվով (գերմաներեն). Բարդմանված է այլեայլ լեզուներու, անգլիերեն, գաղիերեն, իտալերեն, սպաներեն, հունկարերեն, բուլղարերեն, շվեդերեն, հոլանդերեն, հունարեն, ռուսերեն, գաներեն, հայերեն (զոր մենք չենք տեսած) և ռումաներեն: Գաղիերեն թարգմանությունն մինչև ցարդ ունեցած է ութ տպագրություն, անգլիերենն՝ երեք, իտալերենն՝ նույնպես երեք, հունկարերենն՝ երկու: Քյուլեներ ընդունած է գերմանական կառավարությունեն քանի մը անգամ պատվո նշաններ, երեկի պաշտոններ, բրած է շատ տեղեր հրապարակական դասախոսություններ, և այս նշատակով կոչված է նաև Միացյալ Նահանգացի կրթմանցիներեն 1872-ին: Նշանավոր գաղիացի գիտուն մը, ուսուցիչ Գաղիո մեծամեծ պրոֆեսորն միայն մեջ, լսելով Քյուլեների «Չորություն և նյութ» անվանյալ գրույն նոր և զգուշավոր թարգմանությունը և տպագրությունը գաղիերեն՝ գոչեց. «Այս գիրքն է որ բրավո զիս ինչ որ եմ», «C'est ce livre-la' qui m'a fait ce que je suis»:

Նյութականության վրա ըրինք այս համառոտ տեսությունն ի խնդրո հայ երիտասարդ բարեկամի մը: Նույն բարեկամը խնդրած է մենե երկրորդ՝ մեր վերջին խոսքն հայերենի վրա. երրորդ՝ թե ինչ բանե զրդյալ եկանք գրել մեր բնական պատմությունը և չորրորդ՝ թե ինչ պիտի ըլլա մեր բարոյականը:

Կրնանք ըսել գրեթե առանց երկրայության թե հայ լեզուն ունի նախապատմական հնություն, և էր հրեից հին պատմության մեջ հիշված Արարատյան ազգին լեզուն. բայց գծրախտարար չունինք այն լեզուն հին գրված կամ արինակ: Գիտուններն ումանք զարդիս կհուսան հայական, կամ, լավ ևս ասել, Հայաստանի մեջ տեսնված սկստգիր արձանագրություններեն, որոց

¹ Այս առթիվ հետաքրքրական է 1886 թ. «Բան և գաղութն» հոգվածում Գարազյանի արտահայտած հետևյալ միտքը. «մարդիկ հիմա չունեն ամեն տեղ ազատություն բնեկ զոմենայն և հրատարակել իրենց բնություն արդյունքը» («Երկրագունդ», 1886, № 7, էջ 301): Հավանաբար նա այդ եզրակացության է հանգել սույն հոգվածը հրատարակել չկարողանալուց հետո:

² Այդ բարեկամը բանասեր Դ. Խաչկունցն է:

ընթերցման զհետ են՝ տալ մեզ հին հայերեն մը, պնդելով թե այն արձանագրությունք են արդարև հայերեն: Բայց թողնով զայս որ առայժմ, գեթ ըստ մեզ, փորձ է, կհիշենք միայն մեր վիսպասան երգերուն հատուկություններն, որ հասած են մեզ, և մանավանդ թարգմանչաց գործերը, որ ըստ բնության են նույն, և կրնան տալ մեզ հին հայ լեզվի մը տիպարը: Արդ այս լեզուն, գրեթե առանց երկրայության կրնանք բռնել թե արիական լեզվին մեկ ճյուղն է: Այսպես կգտնեն գրեթե բոլոր արդի լեզվաբանք:

Այս հին հայերենն, թեպետ չէ մոռցված և նետված ազգեն, այլ գրեթե բնահանրապես կհարգվի և է շատ տեղ զարոցական ուսմանց մասն, մտնականդ որ է առհասարակ ազգին եկեղեցական լեզուն, սակայն դադրած է ի լինելու բնահանուր մատենադրական, և յայսմ մասին փոխանակված է աշխարհաբար կոչված հայերեններե, որոց գլխավորներն են Թուրքիո և Ռուսիո հայոց սովորական հայերեններն, իրարմ ըստ բավականին տարրեր, յուրաքանչյուրն իրոված անհատներու ճաշակին և ակորթակին: Լեզվին ալս քայքայուն վիճակն, որ արդյունք է ազգին քայքայման, պիտի տեսն ցորչալի կտեսն քայքայումը:

Գալով երկրորդ խնդրույն, թե ինչ պատճառն շարժյալ եկանք դրել մեր քննական պատմությունը, կըսենք: Այս պատճառն, ինչպես կարծենք, առավել քան զբանական հալանի է նույնիսկ մեր պատմությունն, այսինքն՝ տալ ազգին յուր հին պատմությունն որչափ հնար է ազգային և օտար աղբյուրներե որ են ժամանակակից կամ գրեթե ժամանակակից պատմված գիտաց: Հակառակ այդ սկզբան, հայոց պատմության վրա գրող հայ հեղինակներ, թե հին և թե նոր, շատ կարևոր պատմական գիտաց վրա առասպելներ տված են մեզ յան ճշմարիտ պատմություն: Բավական է իրե օրինակ հիշել մեր ազգային պատմության սա երկու գիտվածը. զպատմություն դյուսի հայերեն գրույն առ Մեսրոպով, և զպատմություն դարձին հայոց ի քրիստոնեություն առ Տրդատ: Առաջնույն գլխավոր աղբյուրն է հորենացին՝ կարծված ականատես վկա իրե աշակերտ Մեսրոպով, երկրորդին՝ Ագաթանգեղոս, նույնպես ըստ ավանդության կարծված ականատես վկա, իրե ատենադպիր Տրդատ:

Սեծով մասամբ այսպիսի տեսնելով մեր պատմությունը, լսելով ևս եվրոպացի գիտնոց ծաղրելն զայն իրե վկայարանություն քան պատմություն, ոչ ապաքեն նվիրական պարտք էր մեզ հանել Հայոց պատմություն մի օտար և ընտանի ժամանակակից աղբյուրներե քաղված: Չենք կարծեր թե այսպիսի աշխատության համար դոնովն զմեզ մեղադրողներ: Մինչև ցարդ այսպիսի մեղադրություն չլսեցինք յումեք, մանավանդ բնդ հակառակն դովեստ ազգային և օտար ձեռնահաս գրիչներե: Հայերենի հմուտ գաղիացի գիտուն գրագետն Մ. Լազարիեր, կոչեց մեր քննական պատմությունն որո առաջին մասն միայն տեսած էր, *Excellent travail qui mérite d'être traduit dans une langue européenne*².

¹ Այստեղից կարելի է հետեցնել, որ հոգվածը գրվել է «Քննական պատմության» առաջին հատորը (Կ. Պոլիս, 1880) հրատարակելուց և դրա մասին գրախոսականներ լույս տեսնելուց հետո: Ինչպես նկատելի է, Գարազայանի մոտ թվականներն խիստ շփոթ վիճակ է տիրում: Մեր կարծիքով, սույն հոգվածի թվականը որոշելիս պետք է հենվել այս տվյալի վրա, թանի որ այն ավելի հավասար է:

² Գերազանց աշխատանք, որն արժանի է եվրոպական լեզվի թարգմանվելու:

Գալով վերջին խնդրույն, թե ինչ պիտի ըլլա մեր բարոյականը, կրտսեր: Բարոյական բառն ունի այլևայլ նշանակություններ: Նախ կնշանակե ինչ որ կվերաբերի բարուց, այսինքն՝ մեր վարվելուն մեզ նման մարդոց հետ: Երկրորդ՝ բարոյական կկոչվի աչն դիտությունն, որ կուսուցանե բարվույն հետևելու և չարեն դժուշանալու կանոններ: Բարոյականի մի միայն կարևոր սկիզբն է. «Մի առնել այլոց, զոր ինչ ոչ կամիմք թե արասցեն մեզ այլք»: Ասոր դրականն է. «Առնել այլոց՝ զոր ինչ կամիմք թե արասցեն մեզ այլք»: Բայց այս ևրիորդը չէ, այնպես պարտավորիչ անհատներու համար որպես առաջինն¹:

Բարոյականի այս սկիզբն կամ կանոն հայտնի է գրեթե ամենուին: Բայց որովհետև շատեր զհետ երթալով իրենց առանձին շահուն՝ չեն հնազանդիր այն սկզբան, մանավանդ անոնք որ հզոր և կարող են, ըսելով, «օրենք արդարությունն բռնություն մեր եղիցի», ամեն բարեկարգ ընկերություն ունի յուր օրինաց և պատժո օրինադիրն ամեն քաղաքացիո համար:

Բարոյական կկոչվի նաև զդաստոություն, այնպես որ հիրավի սովոր ենք կոչել անբարոյական դայնալիսիս որոց կյանքն է զեղծ, հակառակ համեստության և ժուժկալության:

Ոմանք շփոթելով բարոյականը կրոնից հետ, կպնդեն թե չկրնար ճշմարիտ բարոյական ունենալ մարդ առանց աշակերտելու այս ինչ կամ այն ինչ կրոնական դրություն, զոր օրինակ քրիստոնեությունն կամ այս ինչ քրիստոնեական աղանդո: Սակայն դիտենք որ հին հունաց և հռոմայեցիոց մեջ անդամ, հառաջ քան զքրիստոնեությունն, եղան շատեր որ փայլեցան ճշմարիտ բարոյականով. բավական է հիշել զաթենացին Արիստիդես զանվանյալն Արդուր, որ ուներ անստղծուտ բարոյական: Անվանի է հռոմայեցին Կենկինատոս, որ իբրեւ մշակ—անձամբ կվարեր զարօրն երբ կոչվեցավ ի պաշտոն քաղաքական վասն աննման... (աշխատության հաջորդ էջերը չկան—Գ. Խ.):

НЕОПУБЛИКОВАННАЯ РАБОТА АНТОНА ГАРАГАШЯНА «РЕЛИГИЯ И НРАВСТВЕННОСТЬ»

Г. Т. ХРЛОПЯН

(Р е з ю м е)

В 7-м отделе под номером 33 архива Тороса Азатяпа Музея литературы и искусства АН АрмССР хранится рукопись известного армянского философа, историка и педагога XIX века Антона Гарагашяна (1818—1903) «Религия и нравственность», написанная в начале 80-х годов. В рукописи излагаются историографические, лингвистические и философские воззрения Гарагашяна. Автор здесь впервые четко определяет свою философскую позицию как материалистическую и атеистическую. Он считает веру в бога силой, тормозящей развитие человечества, и особенно критикует распространенное церковью положение, согласно которому безбожие отождествляется с безнравственностью.

¹ Այս տեսակետն են պաշտպանել ֆեոդալիզմի դեմ պայքարող շատ մատերիալիստ մտածողներ (Հովրախ, Հորս, Լոկկ), որոնք կողմնակից են եղել բնական օրենքի և բնական իրավունքի տեսակետներին չ: